

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/3

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ դիմում-գանգատը (և լրացումը) ՀՀ ՖՆ հետքացթողումային հսկողության վարչության 17.10.2014 թ-ի թիվ 648 ակտի վերաբերյալ:

«Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Սույն դիմում-գանգատով «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ հետքացթողումային վերահսկողության վարչության 17.10.2014 թ-ի թիվ 648 ակտի (այսուհետ՝ Ակտ) 1-ին, 2-րդ և 6-րդ կետերը մասնակի: Ընկերությունը ընդունում է Ակտով իրեն առաջադրված մաքսային վճարների միայն մի մասը, որն առնչվում է Ընկերության և «ООО Орифлейм Косметикс» (ՌԴ) միջև 01.01.2011 թ-ին կնքված թիվ 52 ենթալիցենզիայի համաձայնագրի ներքո «Walt Disney» դիզայնով ապրանքների բաշխման և վաճառքի հետ կապված ՀՀ տարածքի սահմաններում տրամադրված «Walt Disney» ստեղծագործական մշակումների օգտագործման Ընկերությանը տրամադրված ոչ բացառիկ իրավունքների գծով վճարված ռոյալթիներին:

Միաժամանակ Ընկերությունը գտնում է, որ «Walt Disney» ստեղծագործական մշակումների օգտագործման համար վճարվող ռոյալթիների մասով ևս Ակտով առաջադրված մաքսային վճարների հաշվարկը ճշգրիտ չէ կատարված և Ընկերությանն առաջադրված ոչ բոլոր պարտավորությունները կարելի է համարել հիմնավոր: Այն մասով, որով Ակտի գումարը համարվել է հիմնավոր Ընկերությունը կատարել է համապատասխան մաքսային վճարները:

Թեև Ընկերությունը գտնում է, որ մնացած մասով Ակտն անհիմն է, բացի վերը նշված գումարների վճարումից ակտի գանգատարկման տեսակետից հնարավոր անհաջողության պարագայում լրացուցիչ պարտավորությունների հաշվեգրումից խուսափելու նպատակով Ընկերությունը լրացուցիչ կատարել է համապատասխան կանխավճարները մաքսատուրքի ԱԱՀ-ի գծով: Այդուհանդերձ, Ընկերությունը վերապահում է Ակտը վարչական և դատական կարգով վիճարկելու օրենքով նախատեսված իր բոլոր իրավունքները և անհրաժեշտ է համարում հատուկ մատնանշել, որ վերը հիշատակված գերավճարների կատարումը որևէ պարագայում չի կարող դիտվել որպես Ակտով առաջադրված պարտավորությունների ճանաչում կամ դրանում նշված որևէ փաստարկների ընդունում՝ Ընկերության կողմից, բացառությամբ սույն դիմում-գանգատով հստակ նախատեսված դեպքերի:

Հարկ է նշել, որ թեև Ակտով մաքսային վճարներ են առաջադրված ինչպես ԱԱՀ-ի, այդպես էլ մաքսատուրքի գծով (դրանցից բխող տույժերով), սակայն երկու դեպքում էլ առաջադրված պարտավորությունների հիմքում ընկած են միևնույն հանգամանքները: Առաջադրված մաքսային պարտավորությունները վերաբերում են Ընկերության բուն գործունեությանը և գործարար մոդելին և Ընկերության կողմից գերազանցապես չեն ընդունվում: Ակտը, ըստ էության, առավելապես հիմնված է Ընկերության կողմից մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման ոչ ճիշտ մեկնաբանության վրա:

Ակտի 1-ին և 2-րդ կետերը հիմնված են միևնույն նախադրյալների վրա ըստ հետևյալ ձևակերպման.

«Հետքացթողումային հսկողության ժամանակ պարզվեց, որ "Օրիֆլեյմ Քոսմետիքս" ՍՊԸ ընկերությունը (Հայաստանի Հանրապետություն)՝ "Oriflame Georgia LLC" (Վրաստան), STC "Oriflame Caucasus LLC" (Վրաստան), «ООО Орифлейм Косметикс» (ՌԴ) և այլ ընկերություններից ներմուծված ապրանքների հաշիվ-ապրանքագրային արժեքներից բացի, վճարել է նաև այդ ապրանքների իրացումից հետո հաշվարկված համապատասխան

նոյալթիների գումարներ " Oriflame Kosmetiek BV" (Հոլանդիա) և «ООО Орифлэйм Косметикс» (ՌԴ) ընկերություններին:

Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 13-րդ գլխի և "Առևտրի համաշխարհային կազմակերպության սրտեղծման" Մարաքեշի Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող (Հավելված 1ա) "Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի 7-րդ հոդվածի իրականացման մասին" Համաձայնագրի ("Մաքսային արժեքի Համաձայնագիր") 8-րդ հոդվածի դրույթների՝ "ներմուծված ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում են գնահատված ապրանքներին վերաբերող նոյալթիները և լիցենզիաների վճարները, որոնք գնորդ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավոր է վճարել որպես գնահատվող ապրանքների վաճառքի պայման, այնքանով, որքանով որ այդ նոյալթիներն ու վճարները չեն ներառվել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ": Հետևաբար, նոյալթիների հաշիվները սրանալու օրը "Օրիֆլեյմ Քոսմետիքս" ՍՊԸ-ին հայտնի են դարձել նոյալթիների գումարների չափերը, որոնք հանդիսանում են հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքի մեջ ներառվող գումարներ (մաքսային արժեքի բաղկացուցիչներ):

"Օրիֆլեյմ Քոսմետիքս" ՍՊ ընկերության կողմից խախտվել են ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի պահանջները հայտնի դատնալու պահից չեն ներկայացվել տեղեկություններ ներմուծված ապրանքների դիմաց հաշվարկված նոյալթիների և պարզևավճարների գումարների վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և նկատի ունենալով, որ "Օրիֆլեյմ Քոսմետիքս" ՍՊԸ կողմից 2012թ. մարտի 1-ից սկսած ՀՀ տարածք ներմուծված ապրանքները ձևակերպվել են գործարքի գնի մեթոդով հիմնվելով ներմուծված ապրանքներին ուղեկցած հաշիվ-ապրանքագրերին, և հաշվի առնելով, որ հայտարարագրված որոշ ապրանքներ հարկվել են մաքսատուրքի 10% դրույթաչափով՝ եռամսյակը մեկ հաշվարկվող նոյալթիների և պարզևավճարների գումարներից ենթակա են լրացուցիչ հաշվարկման ու գանձման մաքսատուրք և փոյժեր այն սահմանված ժամկետում չվճարելու համար.:

Հարկ է նշել, որ Ակտի վերը մեջբերված հատվածի երկրորդ պարբերության երկու նախադասություններում արտահայտված դատողությունների միջև բացակայում է պատճառահետևանքային տրամաբանական կապը և երկրորդ պարբերության առաջին նախադասությունից բնավ չի բխում երրորդ պարբերության երկրորդ նախադասությունում գետեղված հետևությունը: Երկրորդ պարբերության առաջին նախադասության դրույթների պարզ վերլուծությունից ակնհայտ է, որ երրորդ պարբերության մեջ պարունակվող հետեությանը հանգելու համար ստուգող խումբը Ակտում նկարագրված փաստական տեղեկությունների վերլուծության հիման վրա պետք է որ հիմնավորվեր, որ առկա է եղել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. Ընկերության կողմից վճարված նոյալթիները հանդիսացել են գնահատված ապրանքներին վերաբերող վճարներ.

2. Ընկերությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավոր է եղել վճարել խնդրո առարկա նոյալթիները որպես գնահատվող ապրանքների վաճառքի պայման.

3. խնդրո առարկա նոյալթիները չեն ներառվել համապատասխան ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ:

Նախ, վերը հիշատակված պարբերությունը կրում է դեկլարատիվ բնույթ և Ակտում չի պարունակվում որևէ վերլուծություն, որը թույլ կտար Ակտի փաստական տվյալների հիման վրա հաստատել կամ հերքել վերը նշված պայմանները: Այնուհետ, ընկերությունը գտնում է, որ Ակտում նշված տեղեկությունների հիման վրա չեն կարող հիմնավորվել վերը նշված պայմաններից առնվազն առաջին և երկրորդ պայմանները (որի պարագայում երրորդ պայմանին անդրադառնալու անհրաժեշտությունն արդեն իսկ բացակայում է): Մասնավորապես, իրականում (1) Ընկերության կողմից «know-how»-ի և «Oriflame» ապրանքային նշանի օգտագործման համար վճարված խնդրո առարկա նոյալթիները չեն հանդիսացել գնահատված ապրանքներին վերաբերող վճարներ, այլ վերաբերել են

վերավաճառքի գործընթացի կազմակերպմանը և այդ գործընթացում «Oriflame» ապրանքային նշանի օգտագործմանը այլ կերպ, քան ապրանքների վրա գետեղված լինելով, և (2) Ընկերությունը կողմից խնդրո առարկա հիշյալ ռոյալթիների վճարումը չի հանդիսացել գնահատվող ապրանքների վաճառքի պայման:

Հարկ է նշել, որ Ընկերության կողմից վաճառվող ապրանքների վրա իրոք գետեղված է «Oriflame» ապրանքային նշանը, ինչը հանդիսանում է ապրանքային նշանի օգտագործման եղանակներից մեկը, որի համար ապրանքային նշանի իրավատերը իրոք իրավունք ունի հատուցում ակնկալել օգտագործողից: Այդուհանդերձ, «Oriflame» ապրանքային նշանի նման եղանակով օգտագործման համար ապրանքային նշանի իրավատիրոջը ռոյալթիներ են վճարվում ոչ թե Ընկերության կողմից, այլ արտադրողների կողմից և այդպիսի ռոյալթիներն արդեն իսկ ներառված են Ընկերության կողմից ձեռքբերվող ապրանքների ինքնարժեքի մեջ: Միաժամանակ, Ընկերությունն իր առևտրային գործունեության ընթացքում լայնորեն օգտագործում է «Oriflame» ապրանքային նշանը գետեղելով այն իր առևտրային տարածքների, մարքեթինգային նյութերի, բլանկների, այցեքարտերի, համացանցային կայքի, ուսումնական դասընթացների և այլ նյութերում: Դա նույնպես հանդիսանում է ապրանքային նշանի օգտագործում, որի համար ապրանքային նշանի իրավատերը նույնպես իրավունք ունի հատուցում ակնկալել արդեն իսկ Ընկերությունից: Ուստի, Ընկերությունը վճարում է ռոյալթիներ ապրանքային նշանի օգտագործման համար հենց նման եղանակով իր առևտրային գործունեության ընթացքում «Oriflame» ապրանքային նշանի գործածումից, այլ ոչ թե խնդրո առարկա ապրանքների կապակցությամբ: Եթե առաջնորդվել Ակտի տրամաբանությամբ և համարել, որ Ընկերության կողմից ապրանքային նշանի օգտագործման համար վճարվող ռոյալթիները վերաբերում են Ընկերության կողմից ներմուծվող և իրացվող ապրանքներին, ապա կստացվի, որ Ընկերությունը «Oriflame» ապրանքային նշանն իր առևտրային գործունեության ընթացքում վերը հիշատակված եղանակներով օգտագործելու համար իրականում որևէ վճարումներ չի կատարում: Ի ապացույց այն հանգամանքի, որ խնդրո առարկա ռոյալթիները չեն կարող հանդիսանալ համապատասխան ապրանքների մաքսային արժեքի մաս հարկ է նշել, որ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման վերաբերյալ համապատասխան պայմանագրերի կնքումից հետո, որոնցով նախատեսվեցին խնդրո առարկա ռոյալթիները վճարելու պարտավորությունները, Ընկերության կողմից ներկրվող ապրանքների գները որևէ կերպ չէին նվազել, այլ ընդհակառակը, մի շարք ապրանքների գները ժամանակի ընթացքում աճել են, ընդ որում Ընկերության կողմից ապրանքների ներկրման գինը միանգամայն ողջամիտ է և արտահայտում է ներկրման շուկայական գները: Ավելին, Ընկերությունը ռոյալթիներ վճարում է միայն վաճառված ապրանքների համար և չի վճարում ներկրված, սակայն չվաճառված ապրանքների համար:

Հարկ է հատուկ շեշտել, որ Ակտի հիմքում դրված Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ում ներկայացված մեկնաբանությունների համաձայն, անգամ այն վճարումները, որոնք կատարվում են ներկրողի (գնորդի) կողմից ներկրված ապրանքների վերավաճառքի իրավունքի համար չեն գումարվում ներկրվող ապրանքների փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին, եթե դրանք չեն հանդիսանում ներկրողի երկիր ապրանքներն արտահանելու վաճառքի պայման: Այսպիսով, Առևտրի համաշխարհային կազմակերպության կարգավորումները վերաբերում են ներկրման երկիր ապրանքների արտահանմանը, այլ ոչ թե ներկրման երկրում այդ ապրանքների հետագա վերավաճառքին: Նշենք, որ տվյալ դեպքում ապրանքային նշանի օգտագործման համար վճարումները կատարվում են նույնիսկ ոչ թե վերավաճառքի իրավունքի համար, այլ վերավաճառքի և այլ առևտրային գործունեության ընթացքում «Oriflame» ապրանքային նշանը օգտագործման համար: Առավել ևս դա վերաբերում է մտավոր սեփականության մյուս օբյեկտին վաճառքի «know-how»-ին, որը բացառապես վերաբերում է Ընկերության կողմից կիրառվող վաճառքի տեխնոլոգիային, այլ ոչ թե որևէ կոնկրետ ապրանքի ներկրմանը և որևէ պարագայում չի կարող համարվել ապրանքների նարկրման պայման:

«Walt Disney» ստեղծագործական մշակումների օգտագործման համար վճարվող ռոյալթիներից առաջացող մաքսային վճարների հաշվարկների ճշտության վերաբերյալ հարկ է նշել, որ թեև Ընկերությունն ընդունում է, որ «Walt Disney» ստեղծագործական մշակումների օգտագործման համար վճարվող ռոյալթիները պետք է դիտվեն որպես մաքսային արժեքի տարր և համապատասխան գումարները ենթակա էին հայտարարագրման և դրանց հիման վրա պետք է վճարվեր ԱԱՀ և մաքսատուրք, Ընկերությունը համարում է, որ հայտարարագրման ժամկետի բացթողնման կապակցությամբ Ակտով սխալ են հաշվարկվել ԱԱՀ-ի գծով վճարման ենթակա տույժերը: Մասնավորապես, նշված ռոյալթիները հաշվարկվում և վճարվում են եռամսյակային կտրվածքով: Միաժամանակ, Ընկերությունն ամսական կտրվածքով վճարում է իր գործունեությունից, այդ թվում՝ ներմուծված ապրանքների իրացումից առաջացող ԱԱՀ-ն: Այդպիսով այն պահի դրությամբ, երբ Ընկերության մոտ առաջացել է ԱԱՀ-ն որպես մաքսային վճար վճարելու պարտավորություն Ընկերությունը գերազանցապես փաստացի արդեն իսկ վճարած է եղել համապատասխան գումարի ԱԱՀ իր հարկային պարտավորությունների շրջանակում: Բացառություն են կազմում միայն 2012թ. և 2013թ. չորրորդ եռամսյակների համար վճարված ռոյալթիները: Գտնում ենք, որ նման պարագայում Ընկերությանը ԱԱՀ-ի գծով չէին կարող առաջադրվել տույժեր, քանի որ նման տույժերի կիրառումը կհանդիսանար ձևական պահանջների չարաշահում, ինչը արգելվում է օրենքով:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 69-72 հոդվածների պահանջներով, ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածով, ընկերությունը խնդրում է մասնակի անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ հետբացթողումային վերահսկողության վարչության 17.10.2014թ. թիվ 648 ակտի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերը (բացառությամբ «Walt Disney» դիզայնով ապրանքների բաշխման և վաճառքի հետ կապված վճարված ռոյալթիների գծով առաջադրված և Ընկերության կողմից արդեն իսկ վճարված մաքսային վճարների գծով):

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն 27.09.2014 թ-ի թիվ 648-Ա հրամանի ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ստուգման, այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև մաքսային վճարների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման նպատակով «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ-ում կատարվել է հետբացթողումային հսկողություն: Արդյունքում 17.10.2014 թ-ին կազմվել է թիվ 648 ակտը, որով գանձման է առաջադրվել է ընդամենը 253.221.609 դրամ:

Դիմում-գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Ակտում նկարագրված փաստական տեղեկությունների վերլուծության հիման վրա պետք է հիմնավորվեր, որ առկա են եղել գանգատում թվարկված երեք պայմանների միաժամանակյա առկայությունը, հարկ է նշել հետևյալը:

Ակտում նկարագրված են հետբացթողումային հսկողության ընթացքում ընկերության կողմից տրամադրված այն փաստաթղթերը, որոնք դրվել են մաքսային կանոնների խախտման ապացուցման հիմքում, մասնավորապես.

- “Օրիֆլեյմ Քոսմետիքս” ՍՊ ընկերության (Հայաստանի Հանրապետություն) և “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) միջև 01.01.2011 թ-ին կնքված Ենթալիցենզիայի համաձայնագիրը (“Know-How”) ՀՀ տարածքի համար, համաձայն որի “Օրիֆլեյմ Քոսմետիքս” ՍՊ ընկերությունը ստանում է “Օրիֆլեյմ առևտրային գաղտնիքների” օգտագործման բացառիկ իրավունք՝ կապված “Oriflame” ապրանքների մարկետինգի, բաշխման և վաճառքի

հետ: Նշված համաձայնագրի 5.1. կետի համաձայն “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությունը “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) ընկերությանը պարբերաբար պետք է վճարի ռոյալթի՝ հարկերը հանած իրացման շրջանառության 4 տոկոսի չափով:

- “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերության (Հայաստանի Հանրապետություն) և “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) միջև 01.01.2011 թ-ին կնքված ենթալիցենզիայի համաձայնագիրը (“Trademark royalty”) ՀՀ տարածքի համար, համաձայն որի “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությունը ստանում է “Օրիֆլեյմ ապրանքային նշանի” օգտագործման բացառիկ իրավունք՝ կապված “Oriflame” ապրանքների մարկետինգի, բաշխման և վաճառքի հետ: Եվ նշված համաձայնագրի 5.1. կետի համաձայն “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությունը “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) ընկերությանը պարբերաբար պետք է վճարի ռոյալթի՝ հարկերը հանած իրացման շրջանառության 3 տոկոսի չափով:

“Oriflame” ապրանքային նշանի նկատմամբ ենթալիցենզիան գրանցելու մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության 20.08.2012 թ-ի թիվ 1071266 որոշման պատճենը և “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) ընկերության 13.10.2014 թ-ի տեղեկանքը՝ ապրանքային նշանի ռոյալթիները համաձայնագրի պետական գրանցումից հետո վճարելու վերաբերյալ:

- “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերության (Հայաստանի Հանրապետություն) և “ООО Орифлейм Косметикс” (ՌԴ) միջև 01.01.2011 թ-ին կնքված թիվ 52 ենթալիցենզիայի համաձայնագիրը ՀՀ տարածքի համար, համաձայն որի “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությունը ստանում է “Walt Disney” ընկերության ստեղծագործական մշակումների (“Творческие разработки Walt Disney”) օգտագործման ոչ բացառիկ իրավունք՝ կապված “Walt Disney” դիզայնով ապրանքների բաշխման և վաճառքի հետ: Նշված համաձայնագրի 3.1. կետի համաձայն “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությունը “ООО Орифлейм Косметикс” (ՌԴ) ընկերությանը պարբերաբար պետք է վճարի պարգևավճար՝ առանց հարկերի տվյալ ապրանքների ապրանքաշրջանառության 10.9 տոկոսի չափով՝ արքեսուարներ, ապրանքներ տան համար, երեխաների համար, գրենական պիտույքներ, խաղեր, և 6.4 տոկոսի չափով՝ գեղեցկության և առողջության համար ապրանքներ:

- 01.10.2011 - 30.09.2014 թ.թ. ժամանակաշրջանի համար “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) ընկերության կողմից “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությանը դուրս գրված Know-How ռոյալթիների գումարների հաշիվները,

- 01.10.2011 - 30.09.2014 թ.թ. ժամանակաշրջանի համար “Oriflame Kosmetiek B.V.” (Հոլանդիա) ընկերության կողմից “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությանը դուրս գրված Tardemark ռոյալթիների գումարների հաշիվները,

- 01.10.2011 - 30.09.2014 թ.թ. ժամանակաշրջանի համար ООО Орифлейм Косметикс” (ՌԴ) ընկերության կողմից “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությանը դուրս գրված “Walt Disney” ընկերության ստեղծագործական մշակումների համար պարգևավճարների գումարների հաշիվները,

- ՀՀ տարածք ներմուծված ապրանքների վաճառքից հետո վերը նշված ընկերությունների կողմից դուրս գրված ռոյալթիների հաշիվների դիմաց “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերության կողմից կատարված վճարումները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 13-րդ գլխի և “Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման” Մարաբեշի Համաձայնագրի (ՀՀ համար ուժի մեջ է մտել 2003թ. փետրվարի 5-ից, ՀՀ ԱԳՆ ՊՏ 11 հունիսի 2004թ./ N 2(10)) անբաժանելի մասը կազմող (Հավելված 1ա) “Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի 7-րդ հոդվածի իրականացման մասին” Համաձայնագրի (“Մաքսային արժեքի Համաձայնագիր”) 8-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ “ներմուծված ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում են գնահատված ապրանքներին վերաբերող ռոյալթիները և լիցենզիաների վճարները, որոնք գնորդը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավոր է վճարել որպես գնահատվող ապրանքների վաճառքի պայման, այնքանով, որքանով որ այդ ռոյալթիներն ու վճարները չեն ներառվել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ”:

Հետքացթողումային հսկողության ժամանակ ներկայացված փաստաթղթերի բովանդակությունից բխում է, որ նշված 3 պայմանագրերով վճարված ռոյալթիները վերաբերում են “Oriflame” ապրանքների մարկետինգին, բաշխմանը և վաճառքին և “Walt Disney” դիզայնով ապրանքների բաշխմանը և վաճառքին /1-ին պայմանի առկայություն/:

Առաջին երկու պայմանագրերով հայկական “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությանը տրվել են “Օրիֆլեյմ առևտրային գաղտնիքների” օգտագործման բացառիկ իրավունք և “Օրիֆլեյմ ապրանքային նշանի” օգտագործման բացառիկ իրավունք, որի հետ միաժամանակ ընկերությունը հանդիսացել է “Oriflame” ապրանքանիշի ապրանքների ՀՀ տարածքում միակ ներմուծողը: Այդ իրավունքները ուղղվել են ընկերության կողմից ներմուծված “Oriflame” ապրանքների վաճառքի խթանմանը: Այդ պայմանագրերը օրգանապես փոխկապակցված են և գործել են միաժամանակ հայկական “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերության համար, ռոյալթիների վճարները կատարվել են պարբերաբար սկսած 2011 թվականից, և հանդիսացել են վաճառքի պայման “Oriflame” ապրանքանիշի ապրանքները վրացական և ռուսական ընկերությունների կողմից հայկական ընկերությանը մատակարարելու/վաճառելու համար /2-րդ պայմանի առկայություն/:

3-րդ պայմանագրով հայկական “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերությանը տրվել է “Walt Disney” ընկերության ստեղծագործական մշակումների (“Творческие разработки Walt Disney”) օգտագործման ոչ բացառիկ իրավունք, որի հետ միաժամանակ ընկերությունը հանդիսացել է “Walt Disney” ընկերության ստեղծագործական մշակումներով /պատկերներով/ “Oriflame” ապրանքանիշի ապրանքների ՀՀ տարածքում միակ ներմուծողը: Հայկական “Օրիֆլեյմ Քոսմեթիքս” ՍՊ ընկերության կողմից ռոյալթիների վճարները կատարվել են պարբերաբար սկսած 2011 թվականից և հանդիսացել են վաճառքի պայման:

Համաձայն նշված թվով 3 պայմանագրերի վճարման ենթակա ռոյալթիների և պարզևավճարների գումարները ՀՀ մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում չեն ներառվել ներմուծված ապրանքների ձեռքբերման գնին /3-րդ պայմանի առկայություն/:

Այսպիսով, հիմնավոր է համարվում այն հանգամանքը, որ վճարված ռոյալթիները և պարզևավճարները հանդիսանում են հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքի մեջ ներառման ենթակա գումարներ (մաքսային արժեքի բաղկացուցիչներ):

Ինչ վերաբերվում է Ակտով ԱԱՀ-ի գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ գանգատում բերված պնդումներին, ապա հարկ է նշել, որ լրացուցիչ հաշվարկված մաքսային վճարների՝ մաքսատուրք և մաքսային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ /ՀՀ ՄՕ 97-րդ հոդված/, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ վճարելու համար տույժերը հաշվարկվել են համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ներմուծված ապրանքների իրացման մասով հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարներն այդ ապրանքների ներմուծման մասով պակաս վճարված մաքսային վճարների ուշացման համար տույժեր չհաշվարկելու հիմք չեն կարող հանդիսանալ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ հետքացթողումային հսկողության վարչության 17.10.2014 թ-ի թիվ 648 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ